«ԵՐԿՐԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(Quality Policy)

Նախագիծ	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱԶՄԵՑ	Լուսինե Եղիյան	Որակի պատասխանատու	15.01.2025	
ՍՏՈՒԳԵՑ	Արամ Ստեփանյան	Տնօրեն	16.01.2025	
ՀԱՍՏԱՏԵՑ	Արամ Ստեփանյան	Տնօրեն	17.01.2025	

Որակի ապահովման քաղաքականություն
(Quality Policy)

«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ հանդիսանում է առաջատար կազմակերպություն, որը մասնագիտացած է երկրատարածական տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության ոլորտում: Ընկերության գործունեությունը ներառում է բարձր ճշգրտության քարտեզագրություն, GIS համակարգերի ինտեգրում, բնապահպանական ռիսկերի գնահատում և տեղանքի մոդելավորում՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաներ և միջազգային ստանդարտներ:

Որակի ապահովման քաղաքականությունը հասնդիասանում է Ընկերության ընդհանուր ռազմավարության կարևոր բաղադրիչներից մեկը՝ հիմնված Ընկերության հիմնական արժեքների, նորարարական մոտեցումների և անընդհատ զարգացման սկզբունքների վրա:

Այսպիսով, ընկերության Որակի ապահովման քաղաքականության ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Տրամադրել ծառայություններ և ծրագրային ապահովում, որը համապատասխանում է հաճախորդների պահանջմունքներին և միջազգային ստանդարտներին,
2. Արտադրական գործընթացներում կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ և առաջատար լուծումներ,
3. Ապահովել արդյունավետ հաղորդակցում մատակարարների հետ, պատվիրատուի պահանջների ապահովման նպատակով,
4. Աջակցել և խրախուսել նորարարական լուծումների մշակմանը ու կիրառմանը,
5. Ընկերության աշխատակիցներին ներգրավել որակի ապահովման գործընթացին,
6. Ապահովել Ընկերության աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավումը,
7. Ընկերության հաճախորդների հետ պահապանել կապ՝ հավաքագրելով նրանց արձագանքները՝ ծառայությունների որակի բարելավման նպատակով:

Որակի ապահովման գործընթացում Ընկերությունը հիմք է ընդունում ISO 9001/2015 ստանդարտի պահանջները՝ ներդնելով գործընթացների և նախագծերի ռիսկերի կառավարման համակարգեր՝ որոնք շարունակաբար վերանայվում և զարգացվում են:

Ընկերության ղեկավարությունը ստանձնում(պարտավորվում) է ապահովել անհրաժեշտ բոլոր ռեսուրսները քաղաքականության ներդրման և իրականացման համար:

17.01.2025

Հաստատված է՝ Տնօրեն՝ Արամ Ստեփանյան